**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ 1**
**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ 03.12.2014 Թ. N << ԲԸՀԱՇՁԲ-14/3>>**
**ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան 10 մարտի 2015 թ.

ՀՀ քաղաքաշինության նախարարության <<Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկը (այսուհետև՝ Հիմնարկ), ի դեմս Հիմնարկի տնօրեն Հ. Սարգսյանի, որը գործում է Հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԳՈՂԹՆ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Հովակիմյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից (երկուսը միասին այսուհետ նաև՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական և գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի ք. Վանաձորի գյուղատնտեսական քոլեջի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման 03.12.2014 թ. Կողմերի միջև կնքված N ԲԸՀԱՇՁԲ-14/3 պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.3 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Պայմանագրի կատարման վերջնաժամկետը երկարաձգել մինչև 2015 թվականի ապրիլի 20-ը՝ Պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի աշխատանքի կատարման ժամկետի ավարտը սյունակի «*վերջիններիս ֆինանսական ապահովման օրվանից՝ 100 օրացուցային օրվա ընթացքում*» արտահայտությունը փոխարինել «*2015 թվականի ապրիլի 20-ը*» արտահայտությամբ:

## 2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:
2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:
2.3 Համաձայնագիրը կազմված է մեկ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները եվ ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ ՔՆ <<Քաղաքաշինական ԾԻԳ>>ՊՀ<br>ք.Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3<br>ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011000263, ՀՎՀՀ 02553861 | «ԳՈՂԹՆ» ՍՊԸ<br>ք.Երևան, Վ.Վաղարշյան փ. 14-4<br><<ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ-ԳԱԶՊՐՈՄԲԱՆԿ>> ՓԲԸ<br>Հ/Հ 2380030092280100<br>ՀՎՀՀ 00010182 |
| Տնօրեն Հ. Սարգսյան ---------------- (ստորագրություն)<br>Կ.Տ | Տնօրեն Ա. Հովակիմյան ---------------- (ստորագրություն)<br>Կ.Տ |